ՆԻԿՈԼԻՉԸ՝ ՄԻԱՆՁՆՅԱ ԱՌԱՋԱՏԱՐ

Շախմատի նախաօլիմպիական փառատոնի շրջանակներում անցկացվող Տ. Պետրոսյանի հուշամրցաշարում 4–րդ տուրից հետո միանձնյա առաջատարի դերը ստանձնեց հարավսլավացի Պրեդրագ Նիկոլիչը, որը տեւական պայքարում առավելության հասավ Արտաշես Մինասյանի նկատմամբ եւ այժմ չորս հնարավորից ունի երեք միավոր: Նրանից կես քայլով ետ են մնում եւ 2–4–րդ տեղերը միմյանց միջեւ բաժանում են ռուսաստանցի Սվիդլերը, ամերիկացի Գուլկոն եւ մեր հանրապետության ներկայացուցիչ Լպուտյանը: Այս տուրում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Հակոբյան–Եպիշին՝ 0,5:0,5, Գուլկո–Սվիդլեր՝ 0,5:0,5, Լպուտյան–Վահանյան՝ 0,5:0,5, Հրաչեկ–Էլվեստ՝ 0,5:0,5, Անաստասյան–Խալիֆման՝ 1:0: Ի դեպ, սա մրցաշարում անհաջող մեկնարկած հայ գրոսմայստերի առաջին հաղթանակն էր:



Եթե գրոսմայստերական այս մրցաշարում յուրաքանչյուր տուրից հետո աղյուսակն ավելի հստակ տեսք է ստանում, ապա առայժմ նույնը չի կարելի ասել Հ. Գասպարյանի հուշամրցաշարի մասին: Այստեղ 4–րդ օրվանից հետո միանգամից 10 շախմատիստ վաստակել են 3,5–ական միավոր: Հայաստանի ներկայացուցիչներից առավել հաջող են հանդես գալիս Եղիազարյանը, Նալբանդյանը եւ Ասրյանը, որոնք իրենց հաշվարկում ունեն 2,5–ական միավոր:

Գովեստի խոսքերի է արժանի հատկապես Կարեն Ասրյանը: Երիտասարդ այս շախմատիստը, որն օրերս հանդես էր գալիս «Կրեմլյան աստղեր–96» մրցաշարում, պարզապես հիացրել է մասնակիցներին: Ընդհանուր առմամբ խաղալով 11 պարտիա, նա հաղթանակներ է տարել անվանի գրոսմայստերներ Բելյավսկու, Ռազուվաեւի, Սվեշնիկովի, Կուզմինի նկատմամբ, ոչ–ոքի արել Վահանյանի, Գուլկոյի, Եպիշինի, Նովիկովի հետ եւ միայն Սակաեւին ու Սմիրինին զիջելուց հետո է դուրս մնացել հետագա պայքարից ու ժամանելով Երեւան, բավականին հաջող սկսել մրցաշարը: